

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**

**«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին**

**ՀՈՂՎԱԾ 1.** «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (30 մայիսի 2001 թվականի, ՌՕ-193) 43-րդ հոդվածի 2-րդ մասի լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների աղյուսակի 6-րդ բաժնում՝

1. 11-րդ կետի 2-րդ սուբյակի տեքստը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«կյանքի ապահովագրության յուրաքանչյուր դասի վերաապահովագրության իրականացում».

2. 12-րդ կետի 2-րդ սուբյակի տեքստը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ոչ կյանքի ապահովագրության յուրաքանչյուր դասի վերաապահովագրության իրականացում»:

**ՀՈՂՎԱԾ 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

### **ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**«ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԻՆՉ ԿԱՆՈՒՄ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ԶԶ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ**

22.04.1996թ. Լյուբսեմբուրգում ստորագրված Գործընկերության եւ համագործակցության մասին մի կողմից՝ Հայաստանի Հանրապետության եւ մյուս կողմից՝ Եվրոպական համայնքների (այսուհետեւ՝ Համայնք) ու դրանց անդամ պետությունների միջեւ համաձայնագրի (ուժի մեջ է մտել 01.07.1999թ.) "Օրենսդրական համագործակցություն" 5-րդ բաժնի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսական կապերն ուժեղացնելու համար կարելու պայման է սահմանվել Հայաստանի Հանրապետությունում գործող, ինչպես նաեւ ապագա օրենսդրության մերձեցումը Համայնքի օրենսդրությանը: Հայաստանի Հանրապետությունը պարտավորություն է ստանձնել իր օրենսդրությունն աստիճանաբար դարձնել համատեղելի Համայնքի օրենսդրության հետ:

"Ապահովագրության եւ ապահովագրական գործունեության մասին" (22.05.2007թ. թիվ ՅՕ-177-Ն) ՀՀ օրենքի ընդունմամբ փորձ է արվել համապատասխանեցնելու Հայաստանի ապահովագրության ոլորտը Համայնքի օրենսդրությանը: Սակայն, վերաապահովագրության լիցենզավորման մասով համապատասխանություն չի ապահովվել:

Մասնավորապես, Համայնքի օրենսդրությանը համապատասխան ապահովագրական ընկերություններն իրավունք ունեն միաժամանակ իրականացնելու նաեւ վերաապահովագրական գործունեություն միայն այն դասով, որի համար ունեն ապահովագրության գործունեության լիցենզիա: Ի տարբերություն դրան, Հայաստանում ապահովագրական ընկերությունների կողմից վերաապահովագրության գործունեություն իրականացնելու համար եւս պահանջվում է առանձին լիցենզիա, որը ներառում է կյանքի կամ ոչ կյանքի ապահովագրության բոլոր դասերը:

Ներկայացվող օրենքի նախագծով վերացվում է վերաապահովագրության լիցենզավորման մասով հակասությունը՝ Հայաստանի Հանրապետության եւ Համայնքի օրենսդրությունների միջեւ:

**Հեղինակներ՝** [Վահան Հովհաննեսյան](#), [Արա Նռանյան](#), [Արծվիկ Մինասյան](#), [Արմեն Ռուստամյան](#), [Արտյուշ Շահբազյան](#)